գործով ողջամիտ է չէ, ուստի որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար պետք է համարել 100.000 ՀՀ դրամը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայցադիմումը ենթակա է բավարարման պետք է բռնագանձել պատասխանողից հօգուտ հայցվորի:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ, 234.5-րդ, 234.12-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. «ԷՄՀԱՐ ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ ՀՀ պաշտպանության նախարարության թիվ՝ «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-25-9/2» ծածկագրով գնման ընթացակարգի բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 2025 թվականի հուլիսի 25-ի թիվ 1 որոշմամբ հրապարակված Հրավերի 4-րդ չափաբաժնի գնման առարկայի տեխնիկական բնութագրում նշված հետևյալ պահանջը՝ «Ձեռքբերման ենթակա ապրանքը պետք է լինի Guarisco արտադրող ընկերության Phoenix BLU18 մոդելի և/կամ համարժեք համարվող W&H արտադրող ընկերության Lyla 22 մոդելի և/կամ Techno-Gaz industries արտադրող ընկերության Europa B EVO և/կամ Euronda արտադրող ընկերության E10 մոդելի սարքերից որևիցե մեկը:», անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել:

1.1. անվավեր ճանաչել «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-25-9/2» ծածկագրով գնման ընթացակարգի բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 2025 թվականի հուլիսի 25-ի թիվ 1 որոշմամբ հրապարակված Հրավերի 4-րդ չափաբաժնի գնման առարկայի տեխնիկական բնութագրում նշված հետևյալ պահանջը՝ «Ձեռքբերման ենթակա ապրանքը պետք է լինի Guarisco արտադրող ընկերության Phoenix BLU18 մոդելի և/կամ համարժեք համարվող W&H արտադրող ընկերության Lyla 22 մոդելի և/կամ Techno-Gaz industries արտադրող ընկերության Europa B EVO և/կամ Euronda արտադրող ընկերության E10 մոդելի սարքերից որևիցե մեկը:»:

2. ՀՀ պաշտպանության նախարարությունից հօգուտ «ԷՄՀԱՐ» ՍՊ ընկերության բռնագանձել 60.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարած պետական տուրքի գումար:

3. ՀՀ պաշտպանության նախարարությունից հօգուտ ԷՄՀԱՐ ՍՊ ընկերության բռնագանձել 100.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

4. Դատական ծախսերի հարցը մնացած մասով համարել լուծված:

5. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել Վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Աննա Շիլաջյան**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am